

39. ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՑԻ (ՊՅԵ=1426 մայիս 19 կիր.)

Այս երջանիկ եւ երանելի, աստուածահաճոյ եւ աստուածապարփակ, երանաշնորհ քարոզս կենաց եւ կենդանի նահատակս՝ սուրբ վարդապետս Գրիգորիոս, էր սնեալ եւ վարժեալ ի գործ քահանայութեան առ սուրբ ճգնաւորի միոյ Վարդան կոչեցեալ՝ որ հնգետասան ամ յանապատի էր բնակեալ առ մեծ վարդապետն Տիրատուր: Եւ յետոյ եկեալ էր բնակել ի հռչակաւոր ուխտն սրբոյն Ստեփանոսի՝ Տիպնավանք կոչեցեալ՝ յերկիրն Արծկոյ քաղաքին: Առ որ գնացեալ երջանիկս Գրիգոր եւ ցանկացեալ առաքինասէր վարուց նորա եւ առ նմա կեցեալ ամսս վեց եւ սպասաւորեալ նմա եւ օրհնութիւն ի նմանէ ընկալեալ իբրեւ զօրհնութիւն Աստուծոյ: Եւ էջ հանգեաւ ի վերայ նորա Յոգին Սուրբ, հոգին հեզութեան եւ խոնարհութեան. մինչ զի լուսաւորէր զամենայն բնակիչս գաւառին իմաստութեամբ եւ ուսմամբ՝ իբրեւ զկատարեալ վարդապետ: Եւ հարկեալ յուսումնասէր եղբարց երթալ առ մեծ վարդապետն Յոհաննէս Որոտնեցի՝ մականունն Կախիկ՝ կախեալ ի սէրն Յիսուսի. եւ ութն ամ վարժեալ եւ սիրեցեալ ի նմանէ՝ ուսումնակից իւր ունելով զհամանունն Գրիգոր եւ զերկրորդ լուսաւորիչն Յայոց սուրբ առաքելոյն Ստափէոսի:

Եւ յետ մահուան մեծին Յոհաննու Որոտնեցւոյն եւ աւերման վերին աշխարհին ի չար բռնաւորէն թանուր կոչեցեալ, եկն դարձեալ ի բնիկ գաւառն իւր՝ առ մեծ վարժապետն Սարգիս՝ յերկիրն Քաջբերունեաց՝ ի հռչակաւոր եւ յաստուածաբնակ ուխտն Աստուածածնի՝ որ Սուխարավանք վերակոչի: Եւ անդ վարժեալ եւ բազում աժխատութեամբ դեգերեալ՝ ընկերակից իւր ունելով զմեծ ճգնաւոր վարդապետն Վարդան Յոգեաց Վանացն, որ յետոյ յաջորդեաց զաթոռ վարդապետութեան երանելոյն Սարգիսի:

Եւ տասն ամ առ նմա յամեալ՝ ընկալեալ ի նմանէ զաստիճան վարդապետութեան եւ լուսաւորէր առհասարակ զամենեսեան իմաստութեամբ եւ ընթերցմամբ, գրելով եւ կարդալով, զանձով եւ տաղով, մինչ զի ոչ երեւէր թէ երկրաւոր էր ատեանն, այլ զերկնայնոցն նմանութիւն յինքեան ունէր: Եւ առեալ հրաման ի վարժապետէն իւրմէ դաս ասել եւ աշակերտ ժողովել. եւ նա եկեալ բնակեցաւ յերկիրն Բզնունեաց՝ ի քաղաքն Արծկէ, ի սուրբ ուխտն Ստեփանոսի նախավկային, ի վանսն Տիպտայ, յառաջին տեղին իւր:

Եւ ժողովեաց առ նա բազումք ի կրօնաւորաց եւ յուսումնասէր եղբարց. եւ մխիթարէր զնոսս անճառելի եւ անպատմելի մխիթարութեամբ, Աստուածաշունչ դրոց գիտութեամբ եւ հնոց եւ նորոց իմաստութեամբ, յորդորելով զամենեսեան ի ճշմարիտ հաւատս ուղղափարութեան եւ ի դործս առաքինութեան: Այլ եւ գլխարս իմաստացուցանէր, զտգէտս ի գիտութիւն Տեառն կոչէր, զգերիս ազատէր, զմերկս զգեցուցանէր, զհիւանդս հոգւով եւ մարմնով սփոփէր, զսգաւորս մխիթարէր, զաղքատս կերակրէր, եւ անհանգիստ տքնութեամբ ի գիշերի եւ ի տուրնջեան ձեռօք իւրովք վաստակէր ի գիրս գրչութեան. եւ ի տնանկս կարկառէր եւ ամենեցուն բազձալի լինէր՝ Աստուծոյ, հրեշտակաց եւ մարդկան, հաւատացելոց եւ անհաւատից, մինչ զի երանի տային տեսողքն ի յայլազգեաց ազգիս մեր Յայոց՝ որ այնպիսի առաջնորդ ունին:

Այլ եւ Երկրորդ Վկայասէր անուանեցաւ ի վերջին ժամանակիս եւ յետին դարուս. զի ժաղովեաց զիրս բազումս ի մերոց եւ յօտարաց, զինացեալս եւ զեղծեալս, եւ զծածուկ եւ զանյայտ պատմութիւնս ամենայն սրբոց ի խաւարէ ի լոյս ածեալ եւ արար զդիրս Յայսմաւորաց:

Այլ եւ ժողովեալ զյառաջեցեալ գանձերսն յառաջին վարդարապետացն՝ զոր անընդունակ եւ անպէտս անկեալ կայր, եւ սրբագրեալ ճարտարաբանեաց եւ արար զզիրս Գանձարանին, տաղով եւ մեղեդով, յուրախութիւն եւ ի ցընծութիւն մանկանց եկեղեցւոյ. եւ այնպիսի անուշաձայն եղանակաւ պայծառացոյց զդրունս սուրբ եկեղեցեաց, մինչ զի լուսեղէն զուարթոցն պարակցութիւն ի յերկիր երեւիր, եւ զի ոչ էր եղեալ այնպիսի ուրախութիւն հոգեւոր եկեղեցեացս հայաստանեայց յաւուրս մերոց իշխանացն եւ թագաւորացն: Եւ զամենայն խորին եւ զանհասկանալի բանս քերթեալ եհան ի միջոյ. եւ պարզ եւ յստակ գրեաց զպատմութիւնս սրբոց. եւ զամենայն աստուածաշունչ գրեանս զթարգմանեալսն ի սրբոց թարգմանչացն կրկին յղկեաց եւ եբաց զմիտս գրոց սրբոց, առ ի հասկանալ ամենայն ումեք: Եւ այնպէս փոյթ էր ի գրչութիւնն, մինչ զի ի գիշերի եւ ի տուրնջեան անխափան էր ձեռն նորա ի գրելոյ. եւ անչափ եւ անհամար գրեանս գրեաց եւ բաշխեաց ի դրունս եկեղեցեաց, եւ զորս վաճառէր, առեալ զգինսն բաշխէր աղքատաց եւ կարօտելոց: Ջմերկսն զգեցուցանէր, որբոց եւ այրեաց խնամ ածէր, զգերիսն ազատէր եւ զտնանկսն լցուցանէր: Եւ ա՛յնպէս էր սովորութիւն նորա՝ որ համարով ոչ տայր զողորմութիւն, այլ զոր ինչ առ ինքն ժողովէր՝ ի մի տեղ լնոյր, եւ յորժամ աղքատի հանդիպէր՝ առանց համարի ի միստեղով ի նա տայր: Եւ այնպէս լուսաւորեաց զվերին եւ զներքին կողմանս դրելով եւ կարգելով, եւ ողորմութեան օրինակ լինելով:

Եւ հասեալ ի բարիոք ծերութիւն՝ աւելի քան զեօթանասուն ամ, կամեցաւ զնալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, վարդապետօք եւ աշակերտօք, մխիթարել զհոգեւոր եւ զմարմնաւոր աղքատսն՝ որ անդ կային՝ տրօք եւ իմաստութեամբ: Եւ երկու ամ յամեալ յերուսաղէմ, եւ ապա անտի եկեալ ուրախութեամբ եւ ցնծութեամբ ի բնիկ գաւառն իւր՝ զամենեսեան ուրախ առնէր:

Եւ ի վերայ այսր ամենայնի սուրբ վարուցն առաքինութեան, ցանկայր մարտիրոսութեան հասանել եւ վկայից պսակացն ժամանել: Եւ որ զկամս երկիւղածաց իւրոց առնէ եւ աղօթից նոցա լսէ, կատարեաց զխնդրուածս նորա: Ջի մինչդեռ յուրախութեան եւ ի խաղաղութեան վայելէաք եւ ի քաղցրուսոյց վարդապետութեան նորա պարէաք, ահա յանկարծակի եկն եհաս մրրիկ թշուառութեան ի նենգաժետ եւ յանհաւատ ազգէն Մարաց, զի հասին սուսերօք եւ տիգօք ի վերայ Արծկէ քաղաքին եւ զբազումս սպանին: Եւ այլք ի նոցանէ երթեալ գաղտագողի յաստուածաբնակ ուխտն Տիպնայ, կամէին զբնակեալ սուրբ եղբարսն ի նմա սրոյ ճարակ տալ: Եւ նոցա գիտացեալ փախստական եղեն ի տեղւոջէն:

Իսկ զերջանիկ եւ զերանելի այրն Աստուծոյ զմեծն Գրիգորիոս վարդապետն ո՛չ կարացին հանել ի վանացն. քանզի ասէր. «Աստ կեցից եւ աստ մեռայց, զի թէ ի նոցանէ մեռանիցիմ, հաւատամ ի Տէր իմ Յրոսու Քրիստոս. զի ընդ վկայիցն Աստուծոյ անապական եւ անթառամ ժառանգութեանն արժանաւոր գտայց»:

Եւ մինչ նա յայսպիսի խորհրդեան էր, հասին ի վերայ նորա բազմութիւնք անօրինացն՝ ծարաւիք արեան իբրեւ զշուն կատաղի եւ իբրեւ զգազան ազտեղի: Ընթնեցին զնա իբրեւ զոչխար անմռունչ եւ ասեն եթէ «Դո՞ւ ես որ Իսայուն Աստուած ասես»: Եւ նա ասէ. «Այո՛, ես եմ որ Իսայուն Աստուած ասեմ, զի ճշմարիտ Աստուած է»: Եւ ապա որպէս ոչխար զենին եւ հեղին զաիրուն նորա՝ իբրեւ զգառին անմեղի: Եւ նա աղօթիւք կարդայր առ Աստուած, ասելով. «Տէ՛ր Յիսուս, ընկա՛լ զհոգին իմ ընդ անմեղ վկայիցն քոց եւ խառնեա՛ զմահս իմ ընդ երեւելի սրբոցն գնդից»: Եւ օրհնութեամբ եւ ճշմարիտ դաւանութեամբ աւանդեաց զհոգին իւր ի փառս Զօր եւ Որդւոյ եւ Զոգւոյն Սրբոյ:

Իսկ յետոյ եկեալ հրեղէն լեզուն Յակոբ ճգնաւոր վարդապետն Ղիրմեցին աշակերտօք իւրովք եւ ազգականօք եւ բազում ժողովրդօք. եւ արարին կոծ մեծ ի վերայ նորա եւ եղին սաղմոսիւք եւ օրհնութեամբ ի տապանի ի փոքր բլրին, որ է հանդէպ վանացն յարեւմտեան կուսէն: Այլ վա՛յ եւ եղուկ է մեզ՝ հոգեւոր որդիք հօրն մերոյ խրատեալք, եկայք ի միասին ողբասցուք զհօրն զվտանգ: Ո՛չ թէ հեռացաւ նա ի դառն ծովու խարհիս, այլ զի մեք հեռացաք ի նորա քաղցր եւ վայելուչ տեսութեանցն. մերժեցաք ի քրիստոսանման խոնարհութեանցն. ծարաւ գտաք յանուշահամ բաժակէ գեղեցիկ վարդապետութեանցն. քաղցեալ եղաք ի հոգեւոր գիտութեանցն. օտարացաք յաստուածանման եւ ի քրիստոսատեսակ առաքինութեանցն. եւ խաւար տարածեցաւ ի վերայ հայաստանեաց, զի սուգ անմխիթար մեզ պարահեաց. փայն հոգեւոր երգոց պակասեաց ի դրանէ սուրբ տաճարաց, եկեղեցիք անշքեացան եւ մանկունքն ցրուեցան: Բայց գոհութիւն տացուք Աստուծոյ հօրն երկնաւորի՝ զի այսօր ուրախութիւն է երկնաւորաց եւ երկրաւորաց, զի հայրն մեր հազեւոր ժամանեաց Զօրն գթութեան. որդիացեալն Աստուծոյ ետես զՈրդին Միածին յաթոռ փառաց. բնակարանն Զոգւոյն սրբոյ եհաս Զոգւոյն պարգեւաց. հրեշտակացեալն ի մարմնի խառնեցաւ ի դասս հրեշտակաց. աստուածաբանն միաւորեցաւ ընդ աստուածաբանիցն պարակցութեանց. քահանայն սուրբ քահանայագործեաց ընդ քսան ու չորս երիցանցն. տօնասէրն եւ մարտիրոսասէրն շարադրեցաւ ընդ մարտիրոսացն բազմութեանց. վարդապետն ճշմարտութեան՝ հիմնադիր ուսման ընդ երամս վարդապետաց, վկայն սուրբ՝ ընդ վկայիցն գնդից՝ զՔրիստոս Աստուած եւ Տէր դաւանեաց. ներկեալն արեամբ՝ ընդ արինաներկ սրբազանիցն, եւ կենդանի նահատակն՝ ընդ նահատակսն, ճգնասէրն ընդ ճգնազգեացսն. կուսանն առ կուսանսն վերացաւ. եւ թագաւորեալն ի վերայ ախտից մեղաց՝ ի յերկինս թագաւորեաց. եւ Տէր Յիսուս բազմութեամբ հրեշտակաց ընդ առաջ ընթացաւ նմա. ձայն ետ ընդելական թէ՛ «Ազնի՛ւ, ծառայ բարի եւ հաւատարիմ, եկ մուտ յուրախութիւն իմ որ ոչ տրտմեսցիս, բազմեցուցանեն ի սեղան հօր իմոյ եւ զգեցուցանեն քեզ զգեստ փառաց՝ որ ոչ մաշի. ագուցանեն քեզ պատմուճան՝ որ ոչ աղտեղանայ. մուծանեն յառազաստն իմ՝ որ ոչ լուծանի. ուրախ արարից զքեզ ի պարգեւս իմ՝ որ ոչ աղքատանայ. թագաւորեցուցից զքեզ ի վերայ տասն քաղաքաց, փոխանակ տասն քանքարացն, որ ոչ ծրարեցեր ի վարչամակս ծուլութեան. օրհնեցից զքեզ ի կեանս անվախճանս. եւ ուրախ լեր ի տեսութիւնս իմ անգրաւ յաւրտեանս. քաջ մշակ իմ եւ արթուն անուն նահատակ Գրիգորիոս մեծ վկայ եւ հրամանակատար իմ ծառայն, լեր առ իս բարեխօս եւ միջնորդ հաշտութեան ամենայն ազգաց, որ կան ի յերկիր ի մէջ ամենայն վըշտաց. եւ անդառնալի լիցին ամենայն

խնդրուածք քո առաջի ամենայն դասուց հրեղինաց. այս քեզ յինէն պարգեւք խոստմանց ի փառս Յօր եւ Յոգւոյն իմոյ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Կատարեցաւ նահատակութեամբ մեծ վարդապետն Գրիգորիոս՝ ի ՊՅԴ թուականիս հայոց, ի մայիս ամսոյ ինն՝ յաւուր կիրակէի մեծի պենտէկոստէին գալստեան Յոգւոյն Աստուածոյ, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի եւ աղօթք նորա ի վերայ ամենայն աշխարհի. եւ մաղթանօք նորա Տէր մեզ ողորմեսցի՝ խնդրողացս բանիցս այս՝ երկու Կարապետի ի Թումայ հռետորէ, որ եւ զայոչափ գիծս շարագրեաց. որ եւ նորին յիշատակն օրհնութեամբ եղիցի: Այս գրեցաւ ի Բաղէշ քաղաքի ի վանքս Գոմայ սուրբ Աստուածածնի եւ սուրբ Գեորգեայ զօրավարի. որք հանդիպիք սմա՝ յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր:

Սոյն վկայաբանութիւնն ունին C, M, T եւ r ձեռագրերը. առաջինը C՝ քաղոց ԻԸ եւ յունվար 5, Ս. Ծննդեան ճրադալոյցի պատմութիւնից յետոյ, այս վերնագրով. «Յայսմ աւուր յիշատակ է տիեզերալուր վարդապետին Գրիգորի իսլաթեցոյ.» էջ դճճէ-դճղօ, այն է 487'-490": M հռոյ ժԲ եւ սետպ. 21 Ս. Եզիշէ առաքեալից յռտոյ, այս վերնագրով «Յայսմ աւուր յիշատակ է տիեզերալոյս վարդապետին Գրիգորի իսլաթեցոյ որ մականունն ծերենց ասի, որ զկարճոյ յայսմաւուրքն յաճախեցոյց» էջ 72 ր'-73 ր": T քաղոց ԻԷ եւ յունվար 4՝ Ս. Չոսիմոսից յետոյ, հետեւեալ վերնագրով. «Յայսմաւուր յիշատակ է տիեզերալոյս վարդապետին Գրիգորի իսլաթացոյ», էջ 258 ա"-260 ա": r 499 ա"-500 ր" «պատմութիւն քաչ եւ * մերոյ Գրիգորի իսլաթեցոյ *:-Յմմտ. նաեւ Չամչեան, Գ. 451-2, ուր ասուած է նաեւ «Եւ կալաւ զտեղի նորա (Վարդան վարդապետի) ի Սուխարա Գրիգոր վարդապետ իսլաթեցի՝ մին յաշակերտաց Սարգսի՝ որդի առն ուրումն Ծեր կոչեցելոյ, ուստի եւ ինքն կոչի Գրիգոր Ծերենց:» Նաեւ Այրարատ, էջ 325 ր. ուր ի մէջ այլոց ասուած է թէ «որոյ յիշատակ էանց ի գիրս Յայոմաւուրաց՝ զոր ինքն իսկ կարգաւորէր, յաւելլով զնահատակութիւնս նորոց վկայից, ընդ որոց եւ դասեցաւ ըստ բաղձանաց իւրոց (ի 29 մայիսի, 1426 ամի):»

Սրբի նահատակութեան թուականը շատ խառնակ է. մեր զանազան աղբիւրներն ունին այսպէս՝

| | | | | | | |
|---------|-----------|-----------|-------|-------|---------|--------|
| CT | -ՊՅԴ=1425 | մայիս | 9 | կիր. | Յոգւստ. | |
| r | -ՊՅԳ | =1424 | մայիս | 9 | կիր. | Յոգւստ |
| Այրարատ | | -ՊՅԵ=1426 | | մայիս | 29 | |

Թովմ. Չամչ. -ՊՅԴ=1425

Բայց այս թուականներից եւ ոչ մէկը համաձայն չէ տոմարական հաշիւներին: -Ընդունում ենք թէ նահատակութիւնը եղել է 1424-6 թուականներին, մայիսի մէջ, մի կիրակի օր, Յոգեգալստեան տօնին: Այդ տօնը շարժուում է մայիսի 10-ից մինչեւ յունիս 13, եւ բացարձակապէս անկարող է մայիս 9-ին պատահել. ուստի մայիս 9 յայտնապէս սխալ է: Յոգեգալուստը 1424-6 թուականներին պատահել է հետեւեալ

| | | | |
|------|--------|----|------|
| 1424 | յունիս | 11 | կիր. |
| 1425 | մայիս | 27 | կիր. |
| 1426 | մայիս | 19 | կիր. |

սրանցից առաջինը՝ յունիս է եւ միմիայն r ձեռագիր պահանջածն է, որի մէջ ՊՅԴ կարող էր դիւրութեամբ փոխուել ՊՅԳ ուստի դուրս հանելով այն՝ մնում է յաջորդ երկուքը. սրանցից էլ մենք ընտրում ենք վերջինը՝ որովհետեւ նախ 1426-ը արդէն Ալիշանի դրած թուականն է եւ երկրորդ որ մայիս 19 կարող էր դիւրութեամբ ձեռագրերի մէջ վերածուած լինել 9-ի, Ալիշանի մօտ էլ 29-ի, եթէ այս վերջինը արդէն պարզապէս տպագրական սխալ չէ. մինչդէռ մայիս 27 շատ նուաղ հաւանականութիւն ունի այսպիսի շփոթութիւն կրած լինելու:

Այսպէս ուրեմն մեր քննութեանց արդիւնքը կը լինի ընդունել ՊՅԵ=1426 մայիս 19 կիր.:

Այս տեղ դնում ենք Գրիգոր Խլաթեցու անուանը նուիրուած վկայաբանական տաղը, որը ամբողջովին արտատպում ենք Հայերգից, հաւաքեաց Արիստակէս վարդապետ Տէվկանց, Թիֆլիս, 1882, էջ 175-180: Ինչպէս չորրորդ տան մէջ եւս յատկապէս յիշուում է, տաղի հեղինակն է Յակոբ աշակերտ Գրիգոր Խլաթեցու: Այս Յակոբը պիտի լինի Յակոբ Ղրիմեցի վարդապետը՝ որ նահատակի մարմինը տապանի մէջ դրաւ, տես էջ 270, տող 1-5: Հետաքրքիրն այն է որ այս յայտնի վկայութեան դէմ տաղի սկզբնատառերը կապում են ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՅԱՌԱՔԵԼԵ ՆՈՐԻՆ ԱՇԱԿԵՐՏԷ: Անշուշտ անկարելի է երկուսը իրար հակառակ դնել. ուստի պէտք է ընդունել թէ Առաքել՝ Յակոբ վարդապետ Ղրիմեցու աշխարհական եւ աշակերտական անունն է:

ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՍԱՀ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԾԵՐԵՆՑ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽԼԱԹԵՏԻՈՅ:

| | | | | |
|--------------|------------|---------|-------|-------------|
| Գորովագութ | | ծայն | | կականի, |
| Աղաղակեմ | | | | արտասուալի. |
| Շարժեմ | ի | կոծս | զազգս | Արամի, |
| Ջասքանագեան | | Հայկայ | | տոհմի: |
| Րաբունք | համայն | | որ | յաշխարհի, |
| Լացէք | | զՀայոցս | | եկեղեցի, |
| Որ | մերկացաւ | | | յանկարծակի, |
| Ջլոյսն | պայծառ | | | յաշտանակի: |
| Ինձ | վայ | եղուկ | տխմար | գրչի, |
| Յակոբ | անուն | | գրող | բանի, |
| Հողւոյ | ծնունդ | | հօրն | մեծի, |
| Քաջ | րաբունւոյն | | իմ | Գրիգորի: |
| Գանձ | մերկացայ | | ես | եղկելի, |
| Որ | արտասուաց | | եմ | արժանի, |
| Ջրաբունապետն | | իմ | | բաղձալի, |

| Որ | Եւ | Գրիգոր | անուն | Կոչի: |
|--------------|------------|-----------|--------|-----------|
| Ո՛չ | հանդուրժեմ | | այսմ | աղտի, |
| Այլ | յօժարիմ | | կոծ | սխրալի. |
| Քանզի | տեսի | | զհայրն | բարի, |
| Ներկեալ | արեամբ | | այսօր | յերկրի: |
| Րաբաղ | հոգիս | մեղօք | ի | լի, |
| Չունիմ | | իմաստ | | բանականի. |
| Զի՞նչ | ասիցեմ | | ես | արժանի, |
| Մեծ | րաբունւոյն | | իմ | Գրիգորի: |
| Վարդարապետաց | | էր | | ցանկալի, |
| Խրատիչ, | | քանոն | | ամենայնի. |
| Վարդ | | անթառամ | | յեկեղեցի, |
| Հոտով | լցեալ | | զտունս | Արամի: |
| Արթուն | անուն | | այն | ըղծալի |
| Գրիգորիոսն | | | | երանելի, |
| Արեգական | | նման | | յերկրի, |
| Լուսաւորէր | | | | զեկեղեցի: |
| Րամից | Հայոց | | որ | յաշխարհի, |
| Լուսաւորիչ | էր | | նա | յայտնի. |
| Մեղուցելոց | | մարդկան | | ազգի, |
| Մաքրիչ | | մեղաց | | ամենայնի: |
| Դրախտ | բազմազան | պտղովք | ի | լի, |
| Անուշահամ | | | | անծախելի, |
| Սուրբ | | վարդապետն | | հոգելի, |
| Գրիգորիոսն | | որդին | | Ծերի: |
| Անձամբ | առնէր | | զգործս | բարի, |
| Նման | Փրկչին | | Տեառն | Յիսուսի, |
| Եւ | | քարոզէր | | ամենայնի. |

| | | | | |
|--|-----------------------|--|--------------------|---|
| Խափանեցաւ | | այսօր | | յերկրի: |
| Պատուէր Եւ Վկայասէրն Անուանակից | յօրինէր | զվկայսն | ճառս | Քրիստոսի, ցանկալի, բաղձալի, մեծի: |
| Եհաս Որուն Րաբունապետն Սպանեալ Տասն Էած Ամենագով Գրիգորիոսն | ցանկայր | անանցն տենչամբ ծեռամբն Հայոց կսկիծ հայր | գերետլ | պսակի, սրտի, հրաշալի, անօրինի: ազգի, անբուժելի, բարի, Բզնունի: |
| Ի Էր Միշտ Զգեցուցանող | կերակրող | նեղութեան օգնական մարմնոյ | էր | ժամանակի, ամենայնի. աղքատի, մերկի: |
| Նման Եզբօրնմեծի Նոր Գանձ | նախնոյն եւ | տէր զարդարեաց տաղիւ | այն | Ներսեսի, Գրիգորի, զեկեղեցի, բազմագունի: |
| Յոյժ Հեղ Ոչ Ունէր | քաղցրախօս եւ էր | սիրող զպատուէրն | էր խոնարհ նա | աղքատի, յամենայնի. արծաթի, Քրիստոսի: |
| Արթուն Հանգոյն Եւ . | | հսկող Մաշտոց Գրիգորին . | | անձանձրալի, Մեսրոպբի, Լուսաւորիչի, . |

| | | | |
|--------|--------|---------|-------------|
| Ռետիմ | բաշխեր | մարդկան | ազգի, |
| Ջբանս | | դրոց | պատուիրանի, |
| Մատամբ | | իւրով | անխոջելի, |
| Դպիր | վերին | Տեառն | արքայի: |

| | | | | |
|------------|------|--------|-----|---------|
| Այսօր | եւող | զմեզ | որբ | յերկրի: |
| Ամենագուրք | | Հայրն | | բարի, |
| Հաւասարեալ | | երկնից | | գնդի, |
| Ժառանգ | | անանցն | | պսակի: |

| | | | | |
|-----------|--------|---------|---|-------------|
| Քուրծ | | զգեցիր, | | եկեղեցի, |
| Այրի | | եղեր | | յանկարծակի, |
| Փեսայն | բարձաւ | քո | ի | միջի՝ |
| Յառագաստէ | | քուն | | խորանի: |

| | | | | |
|--------|--------|------------|-------|-----------|
| Եկեալ | | հասին | | վաղվաղակի |
| Ազգն | Մարաց, | որ | Քիւրտ | կոչի, |
| Սպանին | | զհայրն | | ցանկալի, |
| Ի | | Տիպնավանքն | | երեւելի: |

| | | | | |
|-----------|---------|---------|-------|----------|
| Լուսոյն | | ծնունդք | | աւազանի, |
| Դառն | ողբացէք | | զանցս | աղետի, |
| Խաւարեցաւ | | լոյսն | | արփեցի, |
| Ջահն | շրջաւ | | Նոր | Սիովնի: |

| | | | | |
|-------|-----------|-------|------|------------|
| Եհաս | ինձ | | սուգ | անբուժելի, |
| Լալով | | կորեմ | | անլռելի. |
| Ջի | խրատատուն | | իմ | ընծալի՝ |
| Այսօր | թողեալ | | զիս | ամայի: |

| | | | | |
|------------|------|--------|-------|----------|
| Նոր | ծայն | երգեմ | ի | յատենի, |
| Ներբողական | | ի | չափ | տաղի. |
| Առ | քեզ | խօսիմ, | հա՛յր | րաբունի, |
| Միթէ | | հոգիս | | մխիթարի: |

| | | | |
|------------|----------|--------|-----------|
| Ո՛վ | ցանկալիդ | | ամենայնի, |
| Ռաբունապետ | | Հայոց | ազգի, |
| Մտօք | մաքուր, | պայծառ | հոգի, |
| Մարմնովդ | կոյս | ւ | առաքինի: |

| | | | |
|---------|--------|---------|-----------|
| Րոտեալ | | սիրովն | Քրիստոսի, |
| Հովի՛ւդ | քաջ | նորին | հօտի, |
| Վանիչ | | գայլուն | իմանալի, |
| Եւ | արածօղ | ի | դալալի: |

| | | | |
|---------------|-----------|--------|------------|
| Իմաստութիւն | | Հօրն | յերկնի |
| Զքեզ | զարդարեաց | իւր | տեղի. |
| Յորս | եւ | հոգւով | հանգչի, |
| Երրորդութիւնն | | Հայրն | անտրոհելի: |

| | | | | |
|--------|---------|-------|----------|----------|
| Նաւ | ի | ծովու | այսմ | աշխարհի, |
| Ուռկան | | մեծին | այն | որսորդի, |
| Որ | որսացեր | | գծնունդս | ախտի, |
| Հաներ | իջեւանս | որ | մահ | չունի: |

| | | | | |
|--------|----------|---------|---------|------------|
| Աղբիւր | ջրոյն | | այն | կենդանի, |
| Բղխեալ | | հոգւովն | | Քրիստոսի, |
| Որ | ծարաւել | | մարդկան | ազգի |
| Միշտ | արբուցեր | | | անսպառելի: |

| | | | | |
|------------|----------|---------|----------|------------|
| Շնորհազարդ | | տանն | | Յիսուսի |
| Դու | գանձապետ | | իմաստիւք | լի, |
| Միշտ | | բաշխեիր | | յեկեղեցի |
| Զգանձ | հին | եւ | նոր | Կտակարանի: |

| | | | | |
|-------------|-------|--------|-------|----------|
| Ամենիմաստ | | գլուխ | | բարի, |
| Խոնարհեացար | | ի | | տապանի. |
| Ակն | | պայծառ | | առատալի, |
| Ծածկեալ | հողով | | այսօր | յերկիր: |

| | | | | |
|-------------------------|-----------|---------|---------|-------------|
| Կարօտելոցն | | | | աղաղակի, |
| Ունկդ | որ | լսող | էր | ամենի՝ |
| Խափանեցաւ | | | | յանկարծակի, |
| Թողեր | մեզ | | սուգ | անդուժելի: |
| Եւ | երգարանդ | | հոգւոյն | մեծի, |
| Որ | միշտ | | հնչէր | յեկեղեցի, |
| Խոցեալ | | սրոց | | անօրինի, |
| Որ | խօսակից | | էր | աղքատի: |
| Րամից | | որբոց | եւ | տնանկի, |
| Աջդ | որ | շնորհէր | տուրս | ամենի, |
| Կապեալ | եղաւ | իսկ | ի | շիրմի, |
| Որ | միշտ | կրէր | զբանս | տէրունի: |
| Տարակուսիմ | | | | յամենայնի, |
| Քանզի | չունիմ | | իմաստ | բանի, |
| Զքեզ | ներբողել | | ըստ | արժանի, |
| Երախտաւոր | | Չայր | | հոգելի: |
| Էին | տացուք | փառք | ի | յերկրի, |
| Չօր | եւ | Չոգւոյն | ընդ | Միածնի, |
| Որ | դասակցեաց | | հրաբուն | սեռի, |
| Այսօր զքեզ Տէր ըաբունի: | | | | |

Սոյն սրբին վերաբերեալ յաջորդ հատուածը արտատպում ենք Թովմա Մեծորեցու Պատմութիւնից, տպ. Փարիզ, էջ 41-43:

Եւ յաջորդեաց զաքռռ նորա (Վարդան վարդապետի) մեծ վարդապետն եւ նահատակն եւ ողոմածն ամենայնի Գրիգոր՝ որդի հաւատարիմ առն Աստուծոյ Ծերի, գոլով ի քաղաքէն Խլաթայ, յաշակերտացն մեծին Սարգսի՝ հոգեւոր հարազատ եւ համշիրակ իւր. բայց ոչ ի նոյն Սուխարու ուխտն Աստուածածնի, այլ ի յերկիրն Բզնունեաց ի քաղաքն Արծկէ, ի սուրբ ուխտն Ստեփաննոսի վկային Տիպնայ կոչեցեալ: Այլ ոչ պարապեալ վարդապետական դասի վասն սառնացեալ բարուց ուսումնականաց մերուն ազգի: Այլ տիւ եւ գիշեր գիրս գրէր, եւ զամենայն աղքատս կերակրէր, եւ

սիրեր զողորմածութիւն, եւ զամենայն վարդապետս եւ կարդաւորս ի նոյն յորդորեր: Ոչ գոլով նման նմա ողորմած եւ մարդասէր եւ սպասաւոր աղքատաց եւ տնանկաց: Եւ ետ նմա Աստուած իմաստութիւն առաւել քան ամենայն վարդապետաց. վասն զի զերից ժամանակաց պատմութիւնս ի լոյս ածէր ի հարցանելն եւ ի պատասխանատուութիւնս, եւ զգիրս սրբոց մարտիրոսաց եւ վկայիցն որ կոչի Յասմաւորց՝ սակաւաբան եւ անվթար շարադրեալ ի սրբոց հնոց եւ նորոց վարդապետացն՝ ի լոյս էած, զխաւարեալ դրունս եկեղեցւոյ մերոյ լուսաւորեաց. եւ ոչ ոք կարէ գիտել զիմաստութիւնն, որ ի նմա ծածկեալ կայ. այլ Աստուծոյ միայն է գիտելի: Եւ 50 ամ գիրս գրեաց տիւ եւ զիշեր անհանգիստ տքնութեամբ, որպէս գիտակ է գաղտնեաց գիտակն: Եւ բազում երգս դանձուց եւ տաղից յիշատակ թողեալ ինքեան՝ յոյժ տօնասէր եւ պատուող սրբոց՝ մինչ զի եղեալ է եւ ոչ լինելոց է:

Եւ հասեալ ի բարւոք ծերութիւն աւելի քան զ75 ամ եւ յ874 ամի թուականիս մերում եկն պիղծ ազգն Մարաց ի յԱրծկէ քաղաք Յայոց, եւ գնաց յանապատն Յիպնայ, եւ ըմբռնեալ զնա անօրինացն՝ յոյժ տանջեալ չարչարեցին. եւ նա ճշմարիտ դաւանութեամբ զՔրիստոս՝ Աստուած եւ Տէր դաւանեալ խոստովանեցաւ. եւ նոյնժամայն զենին զնա իբրեւ զդառն անմեղ եւ անարատ զերջանիկն եւ զերանելին Գրիգոր՝ փոխանակ դառին Քրիստոսի: Եւ եհաս մարտիրոսական պսակի՝ յոյժ մարտիրոսասէր գոլով. եւ եղին զնա ի սուրբ ուխտն Յիպնայ՝ Նախավկային Ստեփաննոսի անուամբ կոչեցեալ: Եւ հոգեւոր հարազատն իւր վարդապետն Յակոբ ճգնաւոր՝ այրն ցանկալի՝ եկն ամփոփեաց զնա հանդերձ հարազատ որդւովք իւրովք Ստեփաննոս եպիսկոպոսաւ եւ աշակերտաւ. եւ նստաւ սպասաւոր նորա զերեզմանին ամ մի:

Նոյն պատմագիրը երկրորդ անգամ՝ էջ 85, խօսում է նոյն նահատակի մասին՝ հետեւեալ ձեւով.

Եւ ի սոյն աւուրս եկն նենդաժոտ եւ անողորմ Քուրդն Բաղիշոյ ի վերայ աստուածապահ քաղաքին Արծկոյ, եւ հարեալ, սպանեալ, սրախողխող արարեալ զբազումս յազգաց մերոց՝ մանաւանդ զաստուածապատիւ եւ զաստուածապարկակ, զողորմած եւ զերջանիկ վարդապետն Գրիգոր՝ զորդի Ծերին Խլաթեցւոյ՝ ի սուրբ ուխտն Դաստան՝ որ Յիպնավանք վերակոչի: Եւ սուգ եղել ամենայն ազգիս Յայկազնոյ, վասն զի զարդարէր զեկեղեցինս Յայոց Յայսմաւորօք, կորուսեալ ճառիւք, գանձիւք, տաղիւք եւ 55 ամ գիրս գրեաց եւ զամենայնն աղքատաց բաժանեալ: Եւ հեզահոգի եւ յոյժ ուսումնասէր գոլով եւ մարտիրոսաց պատուող՝ մարտիրոսաց պսակացն եհաս: Եւ էր սա աշակերտ մեծին Սարգսի վարդապետին Յայոց, եւ ութն ամ աշակերտեալ Յովհաննու Որոտնեցւոյն, աշակերտակից Մեծին Տաթեւացւոյ: